

ՀՀ ՍԱՏՄ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ՝ Գ. ՄԱՐԳՍՅԱՆԻՆ
ՆՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ՓՈՐՁԱԳԵ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՑ

Հաշվետվություն

Ես՝ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Շիրակի մարզային կենտրոնի (այսուհետ՝ Մարզային կենտրոն) փորձագետ Արտուշ Հովհաննիսյանս, հաշվետու ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

- Մարզային կենտրոնի մասնագետների կողմից պետական վերահսկողության՝ ստուգումների, դիտարկումների, անասնահամաճարակային մշտադիտարկումների արդյուն արդյունքում փաստաթղթերի ուսումնասիրություն, առկա խնդիրների, թերությունների վեր հանում և դրանց շտկումների ուղղությամբ առաջարկությունների ներկայացում

- Դիմում-բողոքների ուսումնասիրություն, դրանց հետագա ընթացքի վերաբերյալ առաջարկությունների ներկայացում

- Տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների շրջանակում, Մարզային կենտրոնի մասնագետների հետ համատեղ, խորհրդատվական և իրազեկման աշխատանքների իրականացում

- Շահագրգիռ անձանց սպանդանոցներին ներկայացվող պահանջների վերաբերյալ պարզաբանումների, խորհրդատվության տրամադրում

- Ընթացիկ գործունեության վերաբերյալ աշխատանքային քննարկումների ժամանակ խնդիրներ և դրանց լուծման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, որոնք քննարկվել և ստացել են համապատասխան լուծումներ